

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

**YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)**

№ 13

**YEREVAN
YSU PRESS
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր
(Ուզբեկստան)

**Čāh (čāl) ԲԱՂԱՂԻԶՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՏԵՂԱՆՈՒՆԵՐԻ
ԻՍՖԱՀԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ**

Բանայի բառեր՝ Իրան, Իսֆահան, տեղանուն, իմաստ, հնավանդ, տեղանվանահիմք, տեղանվանակերտ ածանց

Čāh (čāl) “հոր, ջրհոր” <*čāt-¹ կամ < հին իր. *kan- “փորել”. Այս բառույթը բավական տարածված հիմքակազմիչ և տեղանվանակերտ ձևույթի գործառույթ ունի Իրանի տեղանուններում, այդ թվում՝ Իսֆահան նահանգի բնականուններում: Տեղանուններում այս բառույթը կարող է ստանալ ուղղակի “ցածրադիր վայր, տեղ” նշանակությունը:

Իսֆահան նահանգի Արդեստան շահրեստանի Կենտրոնական շրջանի Օյա դեհեստանի **Čāh-e Rīsa** տեղանունը նշանակում է “դղացող (շարժվող ջուր ունեցող) ջրհոր”, հմմտ.՝ *Rīsa* < խոթան. rīys- “դղացող”² (պարսկերենում այս բառը տեսնում ենք dil rīsa կապակցության մեջ, որի նշանակությունը հայերենում կարող ենք նույնացնել “սիրտը թուլանալ” արտահայտության հետ): Սակայն պետք է նշել, որ այստեղ կարող ենք գործ ունենալ ջրհորների շարքի հետ, այսինքն, պատկերավոր ասած, միևնույն շղթայի մեջ գտնվող, միմյանց հետևից շարված ջրհորների շարքի հետ, ինչը լիովին արտացոլում է *Rīsa*

¹ I Lubotsky, A., (2001), The Indo-Iranian substratum, Mémoires de la Société Finno-ougrienne 242, Helsinki, pp.307

² Bailey, H., (1960), Arya II, Bulletin of School of Oriental and African Studies, University of London, vol. 23, No. 1, pp. 14,16

բառույթը, եթե այն կապում ենք *rīsidan rīštan* “գործել, փաթաթել”, *rīsmān* “պարան” միավորների հետ:³

Իսֆահանի Իսֆահան շահրեստանի **Čāh-e Doxānīāt** բնականունը, ըստ ամենայնի, կազմված է *čāh* “ջրհոր” և արաբ. *doxānīāt* “սև ծուխ (հոգն. թվ.)” բառույթներից: Ընդ որում, երկրորդ բաղադրիչը չնայած համարվում է, որ ունի արաբերեն ծագում և փոխառություն է տաջիկերենում, պարսկերենում, սակայն արևելաիրանական լեզուներում դրա որոշ վկայություններ խոսում են բառույթի ավելի հին ծագման մասին, հմմտ.՝ վախ. *tuxnadud*, “ծխեցնել”, ուուշ. *-(a)dux* բարդությունների երկրորդական ձևային գործառնություն, *taxs-* “ծխալ” սար. *radix-* “ծուխ արձակել” ևլն:⁴ Հեշտ մեկնաբանելի է նույն շահրեստանի **Čāh-e ‘arabhā** տեղանունը, որը նշանակում է “արաբների ջրհոր”, հմմտ.՝ *‘arab* “արաբ” ցեղանունը: Իսկ հարևանությամբ գտնվող **Čāh-e Arteš** գյուղանունը նշանակում է “գորքի ջրհոր”: Ընդհանրապես, *arteš* բառամիավորը գործածության պատմություն չունի, այն առաջացել է բարդ երկրորդական բառաձևից՝ *arteštār artistār*, որը նշանակել է “ռազմիկ, մարտիկ”, հմմտ. մ. պ. *artešt/dār* < ավ. *raθaēštar* “ռազմիկ”):⁵

Čāh միավորը տեղանուններ է կառուցել նաև այլ տեղանունների հետ գործածության միջոցով: Նման կազմության օրինակ է Շահրեզգա շահրեստանի Կենտրոնական շրջանի Մանգարիյե դեհեստանի **Čāh-e Tehrānī** բնականունը, որը նշանակում է “Թեհրանյան ջրհոր”:⁶ Հետաքրքիր է, որ վերջինիս հարևանությամբ հանդիպում է նաև **Čāh-e Sabzevārī** բնականունը

³Horn, P., (1893), *Der Neupersischen Etymologie*, Strassburg N:617

⁴ Стеблин-Каменский, И. М., (1999), *Этимологический словарь Ваханского языка*, Санкт-Петербург, 501 с.361

⁵ Eilers, W., (1953), *Der alte Name des persischen Neujahrsfestes*, Wiesbaden. 213 p.42A

⁶ Հեղինակն այցելելով այս գյուղ ցանակացել է տեղում պարզել տեղանվան ստեղծման պատմությունը, բայց, ցավոք, որևէ բացատրություն չի ստացել:

և կրկին կառուցված է տեղանունից “Սաբգեվարյան ջրհոր”։ Թերևս ճիշտ կարելի էր համարել տեղի բնակիչների առաջ քաշած այն ավանդույթը, համաձայն որի այս գյուղերի բնակիչները նշված վայրերից տեղափոխվածների սերունդեր են և նրանց նախնիները գյուղերը կոչել ըստ այն վայրի, որտեղ երբեմն ապրել են։ Նաթանգի Կենտրոնական շրջանի Քարքաս դեհեստանում է գտնվում **Čāh-eQom** բնակավայրը, որի բնակիչները այստեղ են հաստատվել Ղումից և տեղանունը նշանակում է «Ղումի ջրհոր»։

Նային շահրեստանի Անարաք շրջանի Չուփանյան դեհեստանի **Bīd Čāh** գյուղանունը նշանակում է “Ուռենու ջրհոր”։ Ընդհանրապես, *čāh* բառույթը “հոր, ջրհոր” նշանակություններով տարածված տեղանվանակազմիչ ձևույթ է Իրանի տեղանուններում և այս տեղանվան մեջ ունի “ջրհոր” նշանակությունը, քանզի դաշտային ուսումնասիրությունների ընթացքում գյուղի բնակիչները ցույց տվեցին վաղուց չորացած ջրհորի տեղը, որի կողքին ժամանակին աճել է ուռենի (այժմ՝ ջրհորը չորացած է, տեղը դժվար նշմարելի, ուռենին էլ չկա)։ Այս շահրեստանի Լայե Սիյահ դեհեստանում կար ևս մեկ գյուղ՝ **Bīdčāh**, որի, ինչպես տեսնում ենք երկրորդ -*čāh* բաղադրիչը կարճ -*a-* հնչյունով է։ Հաշվի առնելով, ընդհարապես, արաբական գրի դժվարությունները և տեղանուններում տեղ գտած բազմաթիվ դեպքերը կարճ և երկար հնչյունների ոչ ճիշտ տարբերակման հետ կապված, կարծում ենք, դա նույն *čāh* բառույթն է “ջրհոր” նշանակությամբ և մեկնաբանվում է նույն կերպ, ինչպես նախորդ տեղանունը։⁷

⁷ Իհարկե, այս գյուղում մենք չստեցինք որևէ բացատրություն անվան, կամ գոնե ենթադրյալ ուռենու ու ջրհորի մասին։

Քննարկվող տեղանվանահիմքը անուններ է կազմում բուսանունների և կենդանիների անունների հետ ևս: **Čāh** բառայությով և բուսանունից է կազմված Նային շահրեսատանի Անարաք շրջանի Չուփանան դեհեստանի **Čāh-e Xarboze** տեղանունը: Երկրորդ բաղադրիչը նշանակում է «սեխ», հմմտ.՝ պիլվ. *xarbōjīnā*, *xarbusak*⁸

Կենդանու անունից է կազմված հարևանությամբ հանդիպող **Čāh-e Gorbe** տեղանունը, այսինքն՝ «կատվի ջրհոր», հմմտ.՝ պրսկ. *gorbe* «կատու»: Բնակիչները առասպելախառն պատմություններ էին պատմում այս տեղանվան առաջացման մասին, առ այն, որ իբրև ջրհորում մշտապես կատվի արտացոլանք է երևացել, մյուսներն էլ վկայաբերում էին իբրև կատվի պատկեր ունեցող քարը, որը գտնվում էր ջրհորի մոտ և իբրև հսկում էր այն, որտեղից էլ առաջացել է տեղանունը: Այս պատմությունների ճշմարտացիությունը դժվար է հաստատել: Նային շահրեստանի Բադերան դեհեստանում է գտնվում **Čāh-e Bāša** բնակավայրը, որը կազմված է թռչնանունից՝ *bāša* «բազե», հմմտ.՝ մագանդ., գիլ. *vasāk*: Գյուղանունը նշանակում է «բազեի ջրհոր»:

Բիյաբանաք դեհեստանում են գտնվում միմյանց հարևանությամբ հանդիպող՝ **Čāh-e Afzāl** և **Čāh-e Malak** գյուղանունները: Առաջին անվան *afzāl* բաղադրիչը արաբ. «ավելի բարձր, ավելի լավ» նշանակությունն ունի, իսկ երկրորդ տեղանվան *malak* բաղադրիչը կրկին արաբերեն ծագում ունի և նշանակում է «հրեշտակ»: Երկու տեղանուններում էլ ջրհորին դրական հատկանիշներ են վերագրվել և առաջինը նշանակում է «ընտրյալ, կամ պարզապես, լավ ջրհոր», իսկ երկրորդ տեղանունն ունի «հրեշտակի ջրհոր» նշանակությունները:

⁸ Horn, P., (1893), *Der Neupersishen Etymologie*, Strassburg 474

Նային շահրեստանի Խուրոբիյաբանաք շրջանի Ջանդաղ դեհեստանում է գտնվում **Čāh-e Gīr** գյուղը: Այս գյուղանունը բաղադրիչների տեսանկյունից բավական պարզ է՝ *Čāh* «հոր, փոս» և *-gīr* < *gereftan* < **graub-*, «վերցնել, բռնել» բայի ներկայի հիմքը:

Իսֆահանի Նային շահրեստանի Կենտրոնական շրջանի Լայե Սիյահ դեհեստանի **Čāh-e Sūtak** բնականունը ցեղանունից կազմված տեղանվան օրինակ է: *Sūtak*-ը բախտիարական ցեղանուն է, որի անդամներն էլ կազում են գյուղի բնակչության հիմնական մասը:

Կազմությամբ հարադրավոր տեղանուն է **Mazrae'e-ye Se Čāh** տեղանունը, որը գտնվում է Իսֆահանի Նաջաֆաբաղ շահրեստանի Մեհրդաշտ շրջանի Հոսեյնաբաղ դեհեստանում: Բնականունը կազմված է արաբ. *Mazre'e* «մարգագետին», *Se* «երեք» և *Čāh* «ջրհոր» բաղադրիչներից և նշանակում է «երեք ջրհորների մարգագետին»:

Իսֆահանի Բարխար վա Մեյմե շահրեստանի Բարխար շրջանի Բարխար-ե շարդի դեհեստանի **Čāh-e Sang-e Sefid** բնականունը նշանակում է «Սպիտակ Քարի ջրհոր». բաղկացած է *Čāh* «հոր, ջրհոր», *Sang* «քար» և *Sefid* «սպիտակ» միավորներից:

Čāh միավորը տեղանուններ է կազմել նաև անձնանունների հետ: Նման տեղանուն է **Čāh-e Moxtarī** բնակավայրը՝ Բարխար օ Մեյմե շահրեստանի Մեյմե շրջանի Վանդադե դեհեստանում: Տեղանունը նշանակում է «Մոխթարի ջրհոր»: Նույն շահրեստանի Բարխար-ե Ղարբի դեհեստանի **Čāh-e 'Ābadyān** բնականունը նույնպես կառուցված է անձնանունով և նշանակում է «Աբադյանի ջրհոր» (արաբ. *'Ābad* նշանակում է «հավատացյալ, երկրպագող»): Անձնանունով կառուցված մյուս տեղանունը գտնվում է

Մոբարաբե շահրեստանի Կենտրոնական շրջանի Քարքվանդ դեհեստանում՝ **Čāh-e Nāser-e Karamī**, «Նասեր Քարամիի ջրհոր»։ Հարևանությամբ է գտնվում **Čāh-e Hoseyn Asadyān** բնակավայրը, որն ունի «Հոսեյն Ասադյանի ջրհոր» նշանակությունը։ Առան օ Բիդգոլ շահրեստանի Քավիբաթ շրջանի նույնանուն դեհեստանում է գտնվում **Čāh-e Rafsanjānīhā** տեղանունը՝ «Ռաֆսանաջանիների ջրհոր» նշանակությամբ, Իրանում հայտնի Ռաֆսանաջանի տոհմանվան անունով։ Կրկին հարևանությամբ է գտնվում **Čāh-e Ebrahīmī** տեղանունը, այսինքն՝ «Էբրահիմիի ջրհոր»։ Նույն շահրեստանի Կենտրոնական շրջանի Սեֆիդ Դաշտ դեհեստանում է գտնվում **Čāh-e Mohammad Rezā** բնակավայրը, որի անունը նշանակում է «Մոհամմադ Ռեզայի ջրհոր»։

Իսֆահանի Սամիրոմ Սոֆլա շահրեստանի Կենտրոնական շրջանի Ղամբովան դեհեստանի **Čāh-e Nāserābād** տեղանունը նշանակում է «Նասերաբադի ջրհոր», որի առաջին բաղադրիչը բաղկացած է *Nāser* անձնանունից և *-ābād* տեղանվանակերտ ձևույթից։

Անձնանունով կառուցված վերոբերյալ բնականունները, հիմնականում, անվանակոչվել են ջրհորը կառուցողի անունով։ Նշենք, որ այս բնակավայրերից շատերում ջրհորները այլևս գոյություն չունեն, կամ նրանց մասին կան աղոտ հիշողություններ և չեն էլ կարևորվում, քանի որ տեղանուններում **Čāh-** միավորը արդեն ունի տեղանիշ գործառույթ՝ «տեղ, վայր, գյուղ» իմաստով։

**ТОПОНИМЫ С ЧАСТИЦЕЙ -Čāh (čāl) В ПРОВИНЦИИ
ИСФАХАН
(Резюме)**

Тагван Элахе

Многочисленные иранские топоосновы свидетельствуют о древнем иранском языковом слое этой территории, которое проявляется в двух периодах: ранний и поздний, которое, в свою очередь содержит персидские и местные диалектные формы. Эти топоосновы способствуют выявлению многочисленных единиц иранского происхождения, которые сохранились только в топонимах и показывают ядро западноиранских диалектов. Иранские топоосновы, приобретенные в результате анализа топонимов Исфахана, имеют также самостоятельное лексическое значение, например, “колодец” Čāh (čāl), кстати, во многих населенных пунктах колодцев уже нет, топоним единица – Čāh означает “место, местность, деревня”.